ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 N 64 ,, 15 ,, հուլիսի 2015թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ <<բ>> ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 91 քաղաքացիների հատկացնել 1920000 (մեկ միլիոն ինն հարյուր քսան հազար) դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ